Հավելված N1
Հայաստանի Հանրապետության
պետական եկամուտների կոմիտեի նախագահի
2020 թվականի ապրիլի 17-ի
N 337-Ն հրամանի

Ձև

ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ
ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Հիմնադրամի հոգաբարձուների
խորհրդի 30-06-2025 թ. որոշմամբ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՀԻՄՆԱԴՐԱՄ»
Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն
հիմնադրամի 2024 թ. գործունեության մասին

1. Հիմնադրամի՝		
1.1 Լրիվ անվանումը		ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՀԻՄՆԱԴՐԱՄ
1.2 Գտնվելու վայրը		ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ ԱՐԱԲԿԻՐ ԹԱՂԱՄԱՍ ՀԱԿՈԲ ՀԱԿՈԲՅԱՆ 3
1.3 Պետական գրանցման համարը		222.160.963817
1.4 Պետական գրանցման տարին, ամիսը, ամսաթիվը		2017-06-20
1.5 ՀՎՀՀ-ն		02662248
1.6 Հեռախոսը (այդ թվում՝ բջջային)		+(374)96001286
1.7 Պաշտոնական ինտերնետային կայքը		http://www.fast.foundation.am
1.8 Էլեկտրոնային փոստը		fast@foundation.am
2. Հիմնադրի անուն, ազգանուն կամ անվանում՝		
3. Հոգաբարձուների խորհրդի անդամների անուն, ազգանուն՝		
4. Կառավարչի անուն, ազգանուն՝		
Սյուզաննա Շամախյան		
5. Աշխատակազմում ընդգրկված անձանց քանակը	27	
6. Անձեռնմխելի կապիտալի չափը		
7. Անձեռնմխելի կապիտալի կառավարումից ստացված եկամուտ		
8. Ֆինանսավորման աղբյուրները՝		
8.1 Ֆինանսավորումն ըստ խմբերի	8.2 Ստացված ֆինանսական միջոցների նպատակը	8.3 Չափը
8.1.1 Պետական և համայնքային բյուջեներից դրամական մուտքեր		
8.1.2 Իրավաբանական անձանցից դրամական մուտքեր		
	Հայաստանի գիտական և տեխնոլոգիական զարգացման ապահովման և տեխնոլոգիական արդյունաբերության ստեղծման համար	1,046,199,302
	Ծառայության մատուցումից եկամուտ	25,286,512
8.1.3 Ֆիզիկական անձանցից դրամական մուտքեր		

Digitally signed by MURADYAN ANUSH 7005951085
Date: 2025.06.30 15:47:21 AMT

	Հայաստանի գիտական և տեխնոլոգիական զարգացման ապահովման և տեխնոլոգիական արդյունաբերության ստեղծման համար	6,389,908
9. Հիմնադրի ներդրումը՝		
9.1 Դրամական միջոցներ		
9.2 Գույք	9.2.1 Տեսակը	9.2.2 Արժեքը
10. Նվիրատվությունները/ նվիրաբերությունները		
10.1 Նվիրատուները/նվիրաբերողներն ըստ խմբերի՝	10.2 Նվիրված/նվիրաբերված գույք	
	10.2.1 Տեսակը	10.2.2 Արժեքը
10.1.1 Հայաստանի Հանրապետություն/համայնքներ		
10.1.2 Իրավաբանական անձինք		
10.1.3 Ֆիզիկական անձինք		
11. Իրականացված ծրագրերը՝		
11.1 Ծրագրի անվանումը	11.2 Ծախսված գումարը	
<՛ԱԲ սերունդ> դպրոցական ծրագիր	190,516,494	
Հետազոտական դրամաշնորհային ծրագիր	296,014,044	
<Բի-Օն>կենսատեխնոլոգիական նախատիպային լաբորատորիա	4,816,510	
Գիտության և տեխնոլոգիաների հրեշտակ ներդրողների ցանց	20,852	
Կրթության վերահմաստավորում	1,589	
<Հայաստանի էներգետիկ անկախության Ճանապարհային քարտեզ< հետազոտական դրամաշնորհային ծրագիր	4,266,876	
Ադապտացիոն նորարարական կամպուս	13,371	
1991 բանակային և նախաբանակային դասընթաց	199	
<Նորարար կանայք> ծրագիր	14,350,768	
12. Ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափը	1,094,805,398	
13. Կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերի չափը	510,000,703	

Նշումներ՝

Ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր գումարի մեջ ներառված 5 060 944 ՀՀ դրամը ծախսվել է նոր ծրագրերի հետազոտման և զարգացման համար, 584 804 695 ՀՀ դրամ՝ վարչական ծախսն է, իսկ իրավաբանական անձանցից մուտքերի մեջ ներառված է 3 000 000 ՀՀ դրամ փոխառության գումարը, որը վերադարձվել է նախորդ տարի տրամադրած փոխառության գումարից։ Հաշվետվության 1.7 կետում պաշտոնական կայքը նշված է http://www.fast.foundation.am, քանի որ հաշվետվության ձևաչափը թույլ չի տալիս առանց .am-ի լրացնել այն։

Ֆինանսական հաշվետվություններն ու ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտն իրականացնող անձի (աուդիտորի) եզրակացությունը՝ 33 էջերից։

էջերի քանակը

Հիմնադրամի տնօրեն _____

ստորագրությունը, անունը, ազգանունը

Գլխավոր հաշվապահ _____

ստորագրությունը, անունը, ազգանունը

Համախմբված ֆինանսական հաշվետվություններ և Անկախ աուդիտորի եզրակացություն

Հայաստանի Գիտության և Տեխնոլոգիաների Հիմնադրամ

31 դեկտեմբերի 2024թ.

Բովանդակություն

Անկախ աուդիտորի եզրակացություն	3
Գործունեության մասին համախմբված հաշվետվություն	6
Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն	7
Զուտ ակտիվներում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվություն	9
Դրամական հոսքերի մասին համախմբված հաշվետվություն	10
Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	12

Անկախ աուդիտորի եզրակացություն

Grant Thornton CJSC
Yerevan Plaza Business Center
9 Grigor Lusavorich Street
Yerevan 0015
Republic of Armenia

T +374 10 50 09 64/61

Գրանթ Թորնթոն ՓԲԸ
Երևան Պլազա բիզնես
կենտրոն
ՀՀ, ք. Երևան 0015
Գրիգոր Լուսավորչի 9

Հեռ.՝ +374 10 50 09 64/61

Հայաստանի Գիտության և Տեխնոլոգիաների Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդին

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել Հայաստանի Գիտության և Տեխնոլոգիաների Հիմնադրամի և նրա դուստր ընկերությունների (միասին՝ Խումբ) համախմբված ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունը, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա գործունեության մասին համախմբված հաշվետվությունը, զուտ ակտիվներում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվությունը և դրամական հոսքերի մասին համախմբված հաշվետվությունը, ինչպես նաև համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ հաշվապահական հաշվառման էական քաղաքականության ամփոփ նկարագիրը:

Մեր կարծիքով՝ կից համախմբված ֆինանսական հաշվետվությունները տալիս են Հիմնադրամի՝ 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ համախմբված ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա համախմբված ֆինանսական արդյունքների ու համախմբված դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ներ):

Կարծիքի հիմք

Մենք աուդիտն անցկացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է մեր եզրակացության՝ *«Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար»* բաժնում: Մենք անկախ ենք Խմբից ՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված *«Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի»* (ՀԷՄՍԽ կանոնագիրք) և էթիկայի համապատասխան պահանջների, որոնք կիրառելի են ֆինանսական հաշվետվությունների մեր աուդիտի նկատմամբ Հայաստանի Հանրապետությունում, և կատարել ենք էթիկայի գծով մեր այլ պարտականությունները՝ նշված պահանջների և ՀԷՄՍԽ կանոնագրքի համաձայն: Համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համաձայն համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական

խեղաթյուրումներից զերծ համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ ղեկավարությունը պատասխանատու է Խմբի՝ անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի Խումբը լուծարելու կամ Խմբի գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձիք պատասխանատու են Խմբի ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ համախմբված ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից՝ անկախ դրանց՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած կազդեն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- Հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար ու համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության պատճառով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության չարաշահում:
- Ձեռք ենք բերում պատկերացում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, այլ ոչ թե Խմբի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- Գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը:
- Եզրահանգումներ ենք կատարում ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և, հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա, գնահատում ենք՝ արդյոք առկա է էական անորոշություն դեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ, որը կարող է նշանակալի կասկած հարուցել Խմբի անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել համախմբված ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Խմբին դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը:
- Գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, ինչպես նաև համախմբված ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

- Ձեռք ենք բերում բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ Խմբի ներսում գործող կազմակերպությունների կամ ձեռնարկատիրական գործառնությունների ֆինանսական տեղեկատվության վերաբերյալ՝ համախմբված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ կարծիք արտահայտելու նպատակով: Մենք պատասխանատու ենք Խմբի աուդիտի ուղղորդման, ղեկավարման և իրականացման համար: Մենք ամբողջովին պատասխանատու ենք մեր աուդիտորական կարծիքի համար:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Արմեն Հովհաննիսյան
«Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ի տնօրեն

Էմիլ Վասիլյան, FCCA
Առաջադրանքի ղեկավար

2 մայիսի 2025թ.

Գործունեության մասին համախմբված հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ

	Ծանոթ.	2024թ.	2023թ.
Եկամուտ սահմանափակ օգտագործման ֆոնդերից	5	18,327	8,458
Եկամուտ անսահմանափակ օգտագործման ֆոնդերից	5	1,035,135	707,790
Եկամուտ սեփական օգտագործման ֆոնդերից	12	34,891	71,111
Այլ եկամուտ		29,549	22,617
Վարչական ծախսեր	6	(315,111)	(372,113)
Ծրագրային ծախսեր	7	(544,501)	(420,879)
Հանգանակությունների գծով ծախսեր	8	(299,752)	(219,185)
Ֆինանսական ծախսեր		(10,010)	(12,135)
Փոխարժեքային տարբերությունից զուտ օգուտ (վնաս)		(736)	925
Տարվա արդյունք շարունակական գործառնություններից մինչև հարկերը		**(52,208)**	**(213,411)**
Շահութահարկի գծով փոխհատուցում		817	1,612
Տարվա արդյունք շարունակական գործառնություններից		**(51,391)**	**(211,799)**
Տարվա շահույթ ընդհատված գործառնություններից	15	**(4,589)**	**562**
Տարվա արդյունք և այլ համապարփակ եկամուտ		**(55,980)**	**(211,237)**

Գործունեության մասին համախմբված հաշվետվությունը պետք է ընթերցվի այս համախմբված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 12-ից մինչև 33-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ	Ծանոթ.	31 դեկտեմբերի 2024թ.	31 դեկտեմբերի 2023թ.
Ակտիվներ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Ոչ նյութական ակտիվներ		4,307	2,851
Հիմնական միջոցներ	9	167,562	218,383
Հետաձգված հարկային ակտիվներ		2,429	1,612
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ		**174,298**	**222,846**
Ընթացիկ ակտիվներ			
Պաշարներ		2,577	3,665
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր		1,415	677
Ստացվելիք դրամաշնորհներ		383	-
Կանխավճարներ		14,640	29,775
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	11	33,500	53,359
Որպես ընդհատված գործառնություն դասակարգված օտարման խմբում ներառված ակտիվներ	15	7,172	14,761
Ընդամենը ընթացիկ ակտիվներ		**59,687**	**102,237**
Ընդամենը ակտիվներ		**233,985**	**325,083**

Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն (շարունակություն)

Հազար ՀՀ դրամ	Ծանոթ.	31 դեկտեմբերի 2024թ.	31 դեկտեմբերի 2023թ.
Զուտ ակտիվներ և պարտավորություններ			
Զուտ ակտիվներ			
Կուտակված արդյունք		(29,607)	26,373
Ընդամենը *զուտ ակտիվներ*		**(29,607)**	**26,373**
Պարտավորություններ			
Ոչ ընթացիկ			
Վարձակալության գծով պարտավորություն	13	53,926	74,269
Սեփական օգտագործման ֆոնդեր	12	81,438	102,741
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ		**135,364**	**177,010**
Ընթացիկ			
Սահմանափակ օգտագործման ֆոնդեր		-	1,733
Սեփական օգտագործման ֆոնդեր	12	27,441	34,507
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	14	44,935	33,496
Վարձակալության գծով պարտավորություններ	13	22,560	18,672
Որպես ընդհատված գործառնություն դասակարգված օտարման խմբում ներառված պարտավորություններ	15	33,292	33,292
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ		**128,228**	**121,700**
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ		**233,985**	**325,083**

Համախմբված Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են 2025թ. մայիսի 2-ին՝

Սյուզաննա Շամախյան
Գործադիր տնօրեն

Մարիամ Կնյազյան
Գլխավոր հաշվապահ

Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունը պետք է ընթերցվի այս համախմբված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 12-ից մինչև 33-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Զուտ ակտիվներում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ	**Կուտակված արդյունք**
2023թ. հունվարի 1-ի դրությամբ մնացորդ	**237,610**
Տարվա արդյունք	(211,799)
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	**(211,237)**
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**26,373**
Տարվա արդյունք	(55,980)
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	**(55,980)**
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**(29,607)**

Զուտ ակտիվներում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվությունը պետք է ընթերցվի այս համախմբված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 12-ից մինչև 33-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Դրամական հոսքերի մասին համախմբված հաշվետվություն

Հազար ՀՀ դրամ

	2024թ.	2023թ.
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Շնորհներից և նվիրատվություններից մուտքեր	1,049,589	730,983
Ծառայությունների մատուցումից մուտքեր	25,287	23,220
Տրամադրված նվիրատվություններ	(205,757)	(150,238)
Վճարումներ աշխատակիցներին և ծառայություն մատուցողներին	(736,681)	(677,728)
Վճարված հարկեր, բացի շահութահարկից	(119,603)	(119,588)
Այլ դրամական զուտ մուտքեր (վճարներ)	(1,612)	(5,217)
Ընդհատված գործառնությունների գծով գործառնական գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ	-	2,619
Գործառնական գործունեությունից ստացված (գործունեության համար օգտագործված) դրամական միջոցներ	**11,223**	**(195,949)**

Դրամական հոսքերի մասին համախմբված հաշվետվություն (շարունակություն)

Հազար ՀՀ դրամ

	2024թ.	2023թ.
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Հիմնական միջոցների ձեռքբերում	(4,106)	(34,269)
Ոչ նյութական ակտիվների ձեռքբերում	(2,188)	(16)
Տրված փոխառությունների մարում	3,000	-
Ընդհատված գործառնությունների գծով ներդրումային գործունեության համար (օգտագործված) զուտ դրամական միջոցներ	-	(10,285)
Ներդրումային գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ	**(3,294)**	**(44,570)**
Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Վարձակալության գծով պարտավորությունների դիմաց վճարումներ	(26,467)	(23,835)
Ֆինանսավորման գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ	**(26,467)**	**(23,835)**
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ (նվազում)	(18,538)	(264,354)
Արտարժույթի փոխարժեքի ազդեցությունը դրամական միջոցների վրա	(1,321)	830
Դրամական միջոցների և դրանց համարժեքներ ընդհատված գործառնությունների համար	-	(6,092)
Դրամական միջոցների և դրանց համարժեքներ տարվա սկզբում	53,359	322,975
Դրամական միջոցների և դրանց համարժեքներ տարվա վերջում	**33,500**	**53,359**

Դրամական հոսքերի մասին համախմբված հաշվետվությունը պետք է ընթերցվի այս համախմբված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 12-ից մինչև 33-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

Հայաստանի Գիտության և Տեխնոլոգիաների Հիմնադրամ

2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (արտահայտված հազար հայկական (ՀՀ) դրամով)

1 Գործառնությունների բնույթը

Հայաստանի գիտության և տեխնոլոգիաների հիմնադրամը («Հիմնադրամ») հարթակ է տրամադրում Հայաստանում և նրա սահմաններից դուրս տեխնոլոգիական և գիտական առաջընթաց ապահովելու համար: Հիմնադրամը իրականացնում է նախաձեռնություններ կրթության, գիտահետազոտական և առևտրայնացման ոլորտներում՝ ապահովելով երկարաժամկետ արդյունքներ:

«Հիմնադրամի գործունեության շրջանակում ընդգրկված են իր համակարգի ինստիտուցիոնալ կիրառումը, ինչպիսին է, օրինակ, ADVANCE հետազոտական դրամաշնորհային ծրագիրը, ինչպես նաև Generation AI դպրոցական ծրագրի ընդլայնումը: Հիմնադրամի ուշադրության կենտրոնում շարունակում է մնալ նախաձեռնությունների մասշտաբների ընդլայնումը, գիտության և տեխնոլոգիայի ոլորտում տաղանդների շարունակական ներգրավումը և ռազմավարական համագործակցությունների խթանումը:

Հիմնադրամի ֆինանսավորման աղբյուրներն են ստացված դրամաշնորհներն ու նվիրատվությունները, հանգանակությունները, ինչպես նաև օրենսդրության համաձայն չարգելված այլ գործունեությունից ստացված եկամուտը:

2 Ընդհանուր տեղեկատվություն, ՖՀՄՍ-ներին համապատասխանության հավաստում և անընդհատության ենթադրություն

Հիմանդրամը հիմնադրվել է Հայաստանի Հանրապետությունում 2017թ. հունիսի 20-ին Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան՝ որպես շահույթ չհետապնդող կազմակերպություն:

Խմբի հիմնադիրներն են՝

- Նուբար Աֆեյան Բողոսի
- ԱՅԲ կրթական հիմնադրամ;
- Արթուր Ալավերդյան;
- Ռուբեն Վարդանյան:

Խորհուրդը բաղկացած է 7 անդամից: Խմբի աշխատակիցների միջին թվաքանակը 2024թ. կազմել է 29 մարդ (2023թ.՝ 32 մարդ):

Հիմնադրամի հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, 0033, Հակոբ Հակոբյան փող., 3 շենք:

2020թ. հոկտեմբերի 30-ին Հիմնադրամը հիմնադրել է Ըդվանսդ Սոլուշնս Սենտր ՓԲԸ-ն («դուստր ձեռնարկություն») և ունի 100% սեփականության իրավունք: Դուստր ձեռնարկությունը վենչուրային ընկերություն է: Դուստր ձեռնարկության հիմնական գործունեության մեջ է մտնում ծառայությունների մատուցումը, ապրանքների օտարումը, արհեստական բանականության, տվյալագիտության, հաշվողական վարքագծային հետազոտության, կենսագիտության, նորարար մեթոդների և ռոբոտաշինության ոլորտներում հետազոտություններ կատարելը: Դուստր ձեռնարկությանն ամբողջությամբ պատկանում է Դենովո Սայենսիս ՓԲԸ-ն, որը տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում գործող ստարտափ ընկերություն է:

Դուստր ընկերություններ

Հիմանդրամը 2024թ. դեկտեմբերի 31-ի և 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հանդիսանում է հետևյալ դուստր ձեռնարկությունների միակ մասնակիցն է՝

31 դեկտեմբերի 2023թ. Դուստր ընկերություն	Մասնաբաժին %	Գրանցման երկիր	Գրանցման ամսաթիվ	Գործունեության ոլորտ	Ձեռքբերման ամսաթիվ
Ընդվանսդ Սոլուշնս Սենտր ՓԲԸ	100	Հայաստան	2020թ. հոկտեմբերի 30	Վենչուրային ընկերություն	2020թ. հոկտեմբերի 30
Դենովո Սայենսիս ՓԲԸ	100	Հայաստան	2020թ. նոյեմբերի 18	SS ստարտափ	2020թ. նոյեմբերի 18

2023թ. հոգաբարձուների խորհուրդը որոշել է առանց իրավահաջորդի լուծարել այս դուստր ընկերությունները: Արդյունքում, դուստր ընկերություններն այս ֆինանսական հաշվետվությունում արտացոլված են որպես ընդհատված գործառնություններ:

ՖՀՄՍ 5-ի համաձայն, 2024 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ընդհատված գործառնությունների արդյունքները ներկայացված են գործունեության մասին համախմբված հաշվետվությունում ընթացիկ գործառնություններից առանձին (տես ծանոթ. 15)

Խմբի ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ), որոնք հաստատվել են Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից և Մեկնաբանությունների՝ հաստատված Ֆինանսական հաշվետվությունների մեկնաբանությունների միջազգային կոմիտեի կողմից (ՖՀՄՄԿ):

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են անընդհատության հիմունքներով, քանի որ ղեկավարությունը կարծում է, որ Խումբն ունի համապատասխան ռեսուրսներ տեսանելի ապագայում անընդհատ գործունեություն իրականացնելու համար: Այս գնահատումը կատարելիս ղեկավարությունը հաշվի է առել տեղեկատվության լայն շրջանակ, ներառյալ շահութաբերության կանխատեսումը, ֆինանսավորման կարիքները: Գնահատումը ներառում է նաև ողջամտորեն հնարավոր անկումային տնտեսական սցենարների և դրանց հնարավոր ազդեցությունների դիտարկումը Խմբի շահութաբերության, կապիտալի և իրացվելիության վրա:

Գործարար միջավայր

Հայաստանի գործարար միջավայրը բախվում է մարտահրավերների՝ կապված աշխարհաքաղաքական լարվածության, մասնավորապես՝ Ադրբեջանի կողմից շարունակվող ագրեսիայի և տարածաշրջանային անկայունության հետ: Ուկրաինայի պատերազմն էլ ավելի է բարդացրել իրավիճակը՝ առաջացնելով առևտրի խափանումներ, Ռուսաստանի դեմ պատժամիջոցներ և համաշխարհային գնաճ: Հայաստանի կախվածությունը Ռուսաստանից թուլացել է՝ ազդելով առևտրի, դրամական փոխանցումների և անվտանգության երաշխիքների վրա՝ դրդելով Հայաստանին դիվերսիֆիկացնել իր տնտեսական հարաբերությունները, թեև դա էլ իր ռիսկերն է պարունակում:

Հայկական դրամը սպասվածից ավելի ուժեղ գտնվեց՝ զսպելով գնաճը, բայց դժվարություններ ստեղծելով շահույթ չհետապնդող կազմակերպությունների և արտարժույթով ստացվող դրամաշնորհներ և ծախսեր ունեցող հիմանդրամների համար: Համաշխարհային գնաճը և էներգիայի աճող գները ազդում են ծրագրերի իրականացման ծախսերի վրա, հատկապես այն ոլորտներում, որոնք կախված են ներմուծվող ապրանքներից և ծառայություններից:

Չնայած այս մարտահրավերներին, քաղաքացիական հասարակական կազմակերպությունները հարմարվում են՝ օպտիմալացնելով գործառնական ծախսերը, փնտրելով տարբեր ֆինանսավորման աղբյուրներ և ընդլայնելով տարածաշրջանային համագործակցությունները: Բացի այդ, կառավարության

կողմից իրականացվող բարեփոխումները նաև հիմք են տալիս ավելի կայուն և թափանցիկ համագործակցության համար: Այնուամենայնիվ, ծրագրի իրականացման արդյունավետությունը մեծապես կախված կլինի Խմբի կարողությունից՝ շրջանցելու այս տնտեսական ռիսկերը և համապատասխանաբար հարմարեցնելու իր ռազմավարություններին:

Ղեկավարությունը վերանայել է այս հանգամանքների ազդեցությունը Խմբի անընդհատ գործելու կարողության վրա և եզրահանգել, որ Խմբի կողմից իրականացվող ծրագրերի ֆինանսավորումը հիմնականում գալիս է ԱՄՆ-ից, ծրագրերը կրում են շարունակական բնույթ և ուղղված են ապագայի տեխնոլոգիաներին և դրանց ներդրմանը Հայաստանի կրթական համակարգում, ուստի վերը նշված ազդեցությունը ընթացիկ համախմբված ֆինանսական հաշվետվությունների վրա էական չի համարվում:

Ապագա տնտեսական և քաղաքական իրավիճակը և վերջիններիս ազդեցությունը Խմբի գործունեության վրա կարող են տարբերվել Խմբի ղեկավարության ներկա սպասումներից:

3 Նոր և վերանայված ստանդարտներ կամ մեկնաբանություններ

3.1 2024թ. հունվարի 1-ի դրությամբ ընդունված նոր ստանդարտներ

Ընթացիկ տարում Խումբն ընդունել է իր գործունեության համար կիրառելի և 2024թ. հունվարի 1-ից սկսվող ժամանակաշրջանների համար ուժի մեջ մտած բոլոր նոր և վերանայված ստանդարտները և մեկնաբանությունները, որոնք հրապարակվել են Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) և ՀՀՄՍԽ-ի Մեկնաբանման կոմիտեի (ՄԿ) կողմից:

Նոր ստանդարտներն ու փոփոխությունները, որոնք առաջին անգամ կիրառվել են 2024թ., որևէ էական ազդեցություն չեն ունեցել Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվությունների վրա:

3.2 Ստանդարտներ, փոփոխություններ և մեկնաբանություններ գործող ստանդարտների վերաբերյալ, որոնք դեռևս չեն գործում և նախօրոք չեն ներդրվել Խմբի կողմից

Այս ֆինանսական հաշվետվությունների հաստատման ամսաթվի դրությամբ Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից թողարկվել են որոշակի նոր ստանդարտներ, փոփոխություններ և մեկնաբանություններ գործող ստանդարտների վերաբերյալ, որոնք սակայն դեռևս չեն գործում և նախօրոք չեն ներդրվել Խմբի կողմից:

Ղեկավարությունը կանխատեսում է, որ բոլոր կիրառելի հրապարակումները կներդրվեն Խմբի հաշվապահական հաշվառման քաղաքականությունում՝ սկսած հրապարակման ուժի մեջ մտնելու ամսաթվին հաջորդող առաջին իսկ ժամանակաշրջանից:

Ղեկավարության կանխատեսմամբ այս փոփոխություններն էական ազդեցություն չեն ունենա Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվությունների վրա և ներկայացված են ստորև.

- *«Փոխանակելիության բացակայություն»* (ՀՀՄՍ 21 փոփոխություն)
- *«Ֆինանսական գործիքների դասակարգման և չափման փոփոխություններ»* (ՖՀՄՍ 9 և ՖՀՄՍ 7 փոփոխություններ)
- ՖՀՄՍ 18 *«Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում և բացահայտում»*
- ՖՀՄՍ 19 *«Դուստր ձեռնարկություններ առանց հանրային հաշվետվողականության. բացահայտումներ»*

4 Հաշվապահական հաշվառման էական քաղաքականություն

Ներկայացվող հաշվապահական քաղաքականությունը կիրառվել է ֆինանսական հաշվետվությունների պատրաստման ընթացքում: Հաշվապահական քաղաքականությունը կիրառվել է հետևողականորեն:

4.1 Պատրաստման հիմքերը

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են հաշվեգրման սկզբունքով և պատմական արժեքով:

4.2 Համախմբման հիմքեր

Խմբի ֆինանսական հաշվետվությունները համախմբում են մայր ընկերության և իր բոլոր դուստր ընկերությունների՝ 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական հաշվետվությունները: Բոլոր դուստր ընկերությունների հաշվետու ամսաթիվը դեկտեմբերի 31-ն է:

Համախմբման ժամանակ Խմբի ընկերությունների միջև բոլոր գործարքները և մնացորդները բացառվում են, ներառյալ Խմբի ընկերությունների միջև գործարքների արդյունքում չվաստակած օգուտները և չկրած վնասները: Երբ ակտիվի ներխմբային վաճառքից առաջացող չկրած վնասը համախմբման ժամանակ հակադարձվում է, հիմքում ընկած ակտիվը նաև ենթարկվում է արժեզրկվածության գծով ստուգման՝ Խմբի տեսանկյունից:

Տարվա ընթացքում ձեռք բերած կամ օտարած դուստր ընկերությունների շահույթը կամ վնասը և այլ համապարփակ արդյունքը ճանաչվում են ձեռքբերման ամսաթվից կամ մինչև օտարման ամսաթիվը, որը կիրառելի է:

Խումբը դուստր ընկերությունների ընդհանուր համախառն եկամուտը կամ վնասը բաշխում է մայր ընկերության սեփականատերերի և չվերահսկող բաժնեմասերի միջև՝ առաջնորդվելով սեփականության համապատասխան բաժնեմասով:

4.3 Կլիմային առնչվող հարցեր

Խումբը և նրա հաճախորդները ապագայում կարող են բախվել կլիմայի հետ կապված զգալի ռիսկերի: Այս ռիսկերը ներառում են ֆինանսական կորստի սպառնալիքը և անբարենպաստ ոչ ֆինանսական ազդեցությունները, որոնք ներառում են կլիմայի փոփոխության քաղաքական, տնտեսական և բնապահպանական արձագանքները: Կլիմայական ռիսկերի հիմնական աղբյուրները սահմանվել են որպես ֆիզիկական և անցումային ռիսկեր:

Ֆիզիկական ռիսկերն առաջանում են եղանակային կտրուկ իրադարձությունների հետևանքով, ինչպիսիք են փոթորիկները, ջրհեղեղները և անտառային հրդեհները, ինչպես նաև կլիմայական պայմանների երկարաժամկետ փոփոխությունները, ինչպիսիք են կայուն բարձր ջերմաստիճանը, ջերմային ալիքները, և երաշտը:

Անցումային ռիսկերը կարող են առաջանալ զրոյական արտանետումներով տնտեսության անցնելու հետևանքով, ինչպիսիք են օրենքների և կանոնակարգերի փոփոխությունները, դատավարությունները, որոնք կապված են չեզոքացման կամ հարմարվելու ձախողման հետ, և որոշակի ապրանքների, արտադրանքների և ծառայությունների առաջարկի և պահանջարկի փոփոխությունների հետևանքով՝ կապված սպառողների վարքագծի և ներդրողների պահանջարկի փոփոխության հետ:

Այս ռիսկերը ստանում են աճող կարգավորիչ, քաղաքական և հասարակական վերահսկողություն ինչպես երկրի ներսում, այնպես էլ միջազգային մակարդակով: Թեև որոշ ֆիզիկական ռիսկեր կարող են կանխատեսելի լինել, կան զգալի անորոշություններ դրանց դրսևորման չափի և ժամանակի վերաբերյալ: Անցումային ռիսկերի առումով անորոշությունը պահպանվում է առաջիկա կարգավորող և քաղաքական փոփոխությունների, սպառողների պահանջարկի և մատակարարման շղթաների փոփոխությունների հետ կապված:

Հաշվետու ամսաթվի դրությամբ Հայաստանի Հանրապետությունում չկան գործող օրենսդրական պահանջներ կլիմային առնչվող հարցերի վերաբերյալ: Հետևաբար, խումբը չի նախաձեռնել գնահատում և կլիմային առնչվող ռիսկերը չի ներառել իր ֆինանսական հաշվետվությունների կամ ռիսկերի կառավարման շրջանակներում:

4.4 Արտարժույթ

Գործառնական և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը հայկական դրամն է (ՀՀ դրամ), որն էլ հանդիսանում է Խմբի գործառնական արժույթը, քանի որ այն լավագույնս արտացոլում է համախմբված ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների և Խմբի գործարքների տնտեսական բովանդակությունը:

Սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են հայկական դրամով (եթե այլ բան նշված չէ), քանի որ, ղեկավարության համոզմամբ, այս արժույթն առավել կիրառելի է Խմբի ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների համար: ՀՀ դրամով ներկայացված ամբողջ ֆինանսական տեղեկատվությունը կլորացված է մինչև մոտակա հազար միավորը:

Արտարժույթով գործարքներ

Ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս Խմբի համար գործառնական արժույթից տարբեր այլ արժույթով իրականացված գործարքները գրանցվում են գործարքի օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) կողմից հրապարակված փոխարժեքով: Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային հոդվածները վերահաշվարկվում են՝ կիրառելով հաշվետու ամսաթվի դրությամբ ՀՀ ԿԲ-ի կողմից հրապարակված փոխարժեքը.

	31 դեկտեմբերի 2024թ.	31 դեկտեմբերի 2023թ.
ՀՀ դրամ/1 ԱՄՆ դոլար	396.56	404.79
ՀՀ դրամ/1 Եվրո	413.89	447.90

Ոչ դրամային հոդվածները չեն վերահաշվարկվում և չափվում են պատմական արժեքով (հաշվարկվում են՝ օգտագործելով գործարքի օրվա դրությամբ գործող փոխարժեքը), բացառությամբ իրական արժեքով հաշվառվող և արտարժույթով արտահայտված ոչ դրամային հոդվածների, որոնք վերահաշվարկվում են իրական արժեքի չափման օրվա դրությամբ գործող փոխարժեքով:

Արտարժույթով գործարքներից, ինչպես նաև արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են ժամանակաշրջանի շահույթում կամ վնասում: Իրական արժեքով արտահայտված ոչ դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունները ներառվում են ժամանակաշրջանի շահույթում կամ վնասում:

4.5 Եկամուտ և հասույթ

Եկամուտը ձևավորվում է հիմնականում ստացված դրամաշնորհներից և նվիրատվություններից, ինչպես նաև ծառայությունների մատուցումից:

Եկամուտ սահմանափակ և անսահմանափակ օգտագործման ֆոնդերից

Այս եկամուտը ճանաչվում է, երբ կա ողջամիտ հավաստիացում, որ նվիրատվությունը ստացվելու է կամ երբ փաստացի ստացվել և ներառվում է Գործունեության մասին համախմբված ֆինանսական հաշվետվության «Եկամուտ սահմանափակ օգտագործման ֆոնդերից» և «Եկամուտ անսահմանափակ օգտագործման ֆոնդերից» հոդվածներում:

Եկամուտ սեփական օգտագործման ֆոնդերից

Այս եկամուտը ներառվում է գործունեության մասին համախմբված հաշվետվության «Եկամուտ սեփական օգտագործման ֆոնդերից» հոդվածում՝ դրամաշնորհից ստացված երկարաժամկետ ակտիվների մաշվածության և ամորտիզացված ծախսերի հետ միասին:

Ծառայությունների մատուցում

Ծառայություններից մատուցումից ստացված հասույթը գոյանում է աշխատանքային տարածքի ծառայությունների մատուցումց և ճանաչվում է ծառայությունների մատուցման պահին՝ ըստ դրանց ավարտական վիճակի և ներառվում է Գործունեության մասին համախմբված հաշվետվության «Այլ եկամուտներ» հոդվածում:

4.6 Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվները, որոնք ձեռք են բերվել Խմբի կողմից և ունեն օգտակար ծառայության որոշակի ժամկետ, ներկայացված են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կորուստները:

Ամորտիզացիան ճանաչվում է շահույթում կամ վնասում կամ ավելացվում է այլ ակտիվի սկզբնական արժեքին՝ կիրառելով գծային մեթոդը ոչ նյութական ակտիվի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում, որը կազմում է 1-5 տարի: Ոչ նյութական ակտիվի օգտակար ծառայության ժամկետը հաշվարկվում է այն պահից, երբ ակտիվը պատրաստ է դառնում օգտագործման: Ամորտիզացիան ավարտվում է ավելի շուտ, եթե ոչ նյութական ակտիվը դասակարգվում է վաճառքի համար պահվող կամ եթե ակտիվը ապաճանաչվում է:

4.7 Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները: Սկզբնական արժեքը ներառում է ձեռքբերման գինը, ներկրման տուրքերը, հարկերը, որոնք ենթակա չեն վերադարձման, և ուղղակիորեն վերագրվող ծախսումներ: Երբ հիմնական միջոցների միավորը բաղկացած է տարբեր օգտակար ծառայության ժամկետ ունեցող խոշոր բաղկացուցիչներից, դրանք հաշվառվում են որպես հիմնական միջոցի առանձին միավորներ:

Ակտիվների մնացորդային արժեքները, օգտակար ծառայության ժամկետները և մաշվածության մեթոդները վերանայվում և ճշգրտվում են, յուրաքանչյուր ֆինանսական տարում համապատասխանաբար:

Պահպանման և վերանորոգման հետ կապված ծախսերը ճանաչվում են, երբ դրանք կատարվում են և ներառվում են այլ ծախսերում, եթե ենթակա չեն կապիտալացման:

Հիմնական միջոցի միավորը ապաճանաչվում է օտարումից կամ երբ դրա օգտագործումից կամ օտարումից ապագա տնտեսական օգուտներ չեն ակնկալվում: Ակտիվի ապաճանաչումից առաջացած շահույթը կամ վնասը ներառվում է եկամուտում կամ ծախսում, այն տարում որում ակտիվը ապաճանաչվում է:

Հիմնական միջոցի օտարման կամ դուրսգրման հետևանքով առաջացած օգուտը կամ վնասը որոշվում է վաճառքից հասույթի և ակտիվի հաշվեկշռային արժեքի տարբերությամբ և ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Հիմնական միջոցի՝ որպես առանձին ակտիվ հաշվառվող միավորի բաղկացուցչի փոխարինման ծախսումները կապիտալացվում են դուրս գրված բաղկացուցչի հաշվեկշռային արժեքի հետ: Այլ հետագա ծախսումները կապիտալացվում են միայն այն ժամանակ, երբ դրանք ավելացնում են հիմնական միջոցի միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները: Բոլոր այլ ծախսումները, ներառյալ պահպանման և վերանորոգման ծախսումները, ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ կատարվելու ժամանակաշրջանում:

Մաշվածությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում կամ ավելացվում է այլ ակտիվի սկզբնական արժեքին՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում: Մաշվածության հաշվարկը սկսվում է այն պահից, երբ ակտիվը դառնում է մատչելի՝ իր նպատակային նշանակությամբ օգտագործելու համար:

Հիմնական միջոցների գնահատված օգտակար ծառայության ժամկետները ներկայացված են ստորև.

Մեքենաներ և սարքավորումներ	-	5-8 տարի
Տրանսպորտային միջոցներ	-	10 տարի
Գրասենյակային սարքավորումներ	-	5-8 տարի
Այլ	-	5-8 տարի:
Վարձակալություն	-	օգտակար ծառայության ժամկետից և հիմնական վարձակալության ժամկետից ավելի կարճ ժամկետում

4.8 Վարձակալված ակտիվներ

Գրասենյակային տարածքների վարձակալության պայմանագրերը սովորաբար կնքվում են 3-ից 5 տարի ժամկետով, որոնցից մի քանիսն ունեն երկարաձգման ժամկետ: Ընդհանուր առմամբ յուրաքանչյուր վարձակալություն ունի սահմանափակում, ըստ որի օգտագործման իրավունքի ձևով ակտիվը կարող է օգտագործվել միայն Խմբի կողմից, քանի դեռ առկա չէ ակտիվը երրորդ կողմին տրամադրելու պայմանագրային իրավունք: Վարձակալությունը ենթակա չէ չեղարկման, կամ հնարավոր է դադարեցնել

միայն նախատեսված չափով վճարում կատարելու դեպքում: Որոշ վարձակալություններ պարունակում են հիմքում ընկած ակտիվն անմիջապես վարձակալության ժամկետի ավարտին ձեռք բերելու կամ վարձակալության ժամկետը երկարացնելու հնարավորություն:

Վարձակալության ճանաչումը և չափումը որպես վարձակալ

Վարձակալության մեկնարկի ամսաթվի դրությամբ, Խումբը իր ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում ճանաչում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվը: Օգտագործման իրավունքի ձևով ակտիվները չափվում են ինքնարժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները և ճշգրտվում վարձակալության պարտավորությունների ցանկացած վերաչափման ժամանակ: Օգտագործման իրավունքի ձևով ակտիվների արժեքը ներառում է վարձակալության գծով ճանաչված պարտավորությունների գումարը, կատարված սկզբնական ուղղակի ծախսումները և վարձակալության գծով վճարումները, որոնք կատարվել են մեկնարկի ամսաթվի դրությամբ կամ դրանից առաջ՝ հանած վարձակալության վճարները: Եթե Խումբը համոզված չէ, վարձակալված ակտիվի նկատմամբ սեփականության իրավունք ձեռք բերելու հարցում, ապա օգտագործման իրավունքի ձևով ճանաչված ակտիվները ամորտիզացվում են գծային մեթոդով՝ դրանց գնահատված օգտակար ծառայության և վարձակալության ժամկետից ավելի կարճ ժամանակահատվածում: Օգտագործման իրավունքի ձևով ակտիվները ենթակա են արժեզրկման:

Մեկնարկի ամսաթվին Խումբը չափում է վարձակալության գծով պարտավորությունն այդ ամսաթվին դեռևս չվճարված վարձավճարների ներկա արժեքով, որոնք պետք է կատարվեն վարձակալության ժամկետի ընթացքում: Վարձակալության գծով պարտավորության չափման մեջ ներառվող վարձավճարները պարունակում են հաստատուն վճարումներ, հանած ցանկացած ստացվելիք վարձակալական խրախուսումներ, վարձակալության փոփոխուն վճարումներ, որոնք կախված են ինդեքսից կամ դրույքից, գումարներ, որոնք, ինչպես սպասվում է կվճարվեն մնացորդային արժեքի երաշխիքի ներքո: Վարձակալության գծով վճարները ներառում են նաև գնման օպցիոնի իրականացման գինը, որի իրականացման մասով կա ողջամիտ հավաստիացում, և վարձակալության դադարեցման համար կիրառվող տույժերը, եթե վարձակալության ժամկետը արտացոլում է Խմբի կողմից դադարեցման տարբերակը: Վարձակալության գծով փոփոխուն վճարումները, որոնք կախված չեն ինդեքսից կամ դրույքից, ճանաչվում են որպես ծախս այն ժամանակաշրջանում, երբ տեղի է ունենում վճարման պատճառ հանդիսացող իրադարձությունը կամ պայմանը:

Սկզբնական չափումից հետո պարտավորությունը կնվազեցվի կատարված վճարումների և կմեծացվի տոկոսների չափով: Այն վերաչափվում է՝ արտացոլելու ցանկացած վերագնահատում կամ փոփոխություն, կամ եթե առկա են փոփոխություններ ըստ էության հաստատուն վճարումներում:

Վարձակալության գծով վարձավճարների ներկա արժեքը հաշվարկելիս Խումբը օգտագործում է փոխառության տոկոսադրույքը վարձակալության մեկնարկի ամսաթվի դրությամբ, եթե վարձակալության մեջ նշված տոկոսադրույքը հեշտությամբ որոշել հնարավոր չէ: Մեկնարկի ամսաթվից հետո վարձակալության գծով պարտավորությունը կնվազեցվի վարձակալության գծով վճարումների չափով և կմեծացվի օգտագործման իրավունքի ձևով ակտիվների չափով: Ի լրումն, վարձակալության գծով պարտավորությունների հաշվեկշռային արժեքը վերաչափվում է՝ արտացոլելու վարձակալության ժամկետի փոփոխություն, բովանդակության փոփոխություն, հաստատուն վճարումների կամ հիմքում ընկած ակտիվի ձեռքբերման գծով գնահատման փոփոխություն:

Խումբը կարճաժամկետ վարձակալությունների և փոքրարժեք ակտիվների վարձակալությունների հաշվառման համար ընտրել է գործնական մոտեցումներ: Օգտագործման իրավունքի ձևով ակտիվ և վարձակալության գծով պարտավորություն ճանաչելու փոխարեն, դրանց հետ կապված վճարումները վարձակալության ժամկետի ընթացքում ճանաչվում են շահույթում կամ վնասում որպես ծախս՝ գծային հիմունքով:

Խումբը՝ որպես վարձատու

Որպես վարձատու՝ Խումբը դասակարգում է իր վարձակալությունները որպես գործառնական կամ ֆինանսական:

Վարձակալությունը դասակարգվում է որպես ֆինանսական, եթե այն փոխանցում է հիմքում ընկած ակտիվի սեփականության իրավունքի հետ կապված ըստ էության բոլոր ռիսկերը և օգուտները և գործառնական, եթե նշվածը տեղի չի ունենում:

4.9 Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների արժեզրկում

Անորոշ օգտակար ծառայության ժամկետ ունեցող ակտիվները չեն ամորտիզացվում և յուրաքանչյուր տարի ենթարկվում են արժեզրկման ստուգման: Մաշվող ակտիվներն արժեզրկման համար վերանայվում են, երբ իրադարձությունները և հանգամանքների փոփոխությունները վկայում են այն մասին, որ դրանց հաշվեկշռային արժեքը կարող է չվերականգնվել: Արժեզրկման կորուստը ճանաչվում է այն գումարով, որով ակտիվի հաշվեկշռային արժեքը գերազանցում է փոխհատուցվող գումարը:

Փոխհատուցվող գումարը վաճառքի զուտ գնից և օգտագործման արժեքից առավելագույնն է: Եթե ակտիվի կամ դրամաստեղծ միավորի փոխհատուցվող գումարն ավելի փոքր է նրա հաշվեկշռային արժեքից, ապա ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև փոխհատուցվող գումարը: Արժեզրկումից կորուստներն անմիջապես ճանաչվում են որպես ծախս, բացառությամբ այն դեպքերի, երբ համապատասխան ակտիվը հաշվառվում է վերագնահատված արժեքով, որի դեպքում արժեզրկումից կորուստը դիտվում է որպես վերագնահատումից արժեքի նվազում:

Երբ հետագայում արժեզրկումից կորուստը հակադարձվում է, ապա ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը պետք է ավելացվի մինչև նրա փոխհատուցվող գումարը, բայց այնպես, որ ակտիվի ավելացված հաշվեկշռային արժեքը չգերազանցի այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլիներ, եթե նախորդ տարիներին այդ ակտիվի կամ դրամաստեղծ միավորի գծով արժեզրկումից կորուստներ ճանաչված չլինեին: Արժեզրկումից կորստի հակադարձումն անմիջապես ճանաչվում է որպես եկամուտ, բացառությամբ այն դեպքերի, երբ համապատասխան ակտիվը հաշվառվում է վերագնահատված արժեքով, որի դեպքում արժեզրկումից կորստի ցանկացած հակադարձում դիտվում է որպես վերագնահատումից արժեքի աճ:

4.10 Ֆինանսական գործիքներ

Ճանաչում և ապաճանաչում

Ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները ճանաչվում են, երբ Խումբը դառնում է ֆինանսական գործիքի պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվները, որոնք ճանաչվում են սկզբնապես, չափվում են իրական արժեքով՝ հանած ուղղակիորեն վերագրելի ծախսումները, այնուհետև չափվում՝ամորտիզացված արժեքով:

Ֆինանսական պարտավորությունները սկզբնապես չափվում են իրական արժեքով՝ հանած ուղղակիորեն վերագրելի գործարքի ծախսումները, և եթե չեն դասակարգվել իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով, հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով: Խմբի ֆինանսական ակտիվներն ըստ կատեգորիաների ներկայացված է Ծանոթագրություն 10.1-ում:

Ֆինանսական ակտիվների դասակարգումը և սկզբնական չափումը

Բոլոր ֆինանսական ակտիվները սկզբնապես չափվում են իրական արժեքով՝ գումարած գործարքի հետ կապված ծախսումները, բացառությամբ այն առևտրային դեբիտորական պարտքերի, որոնք չեն պարունակում էական ֆինանսական բաղադրիչ և չափվում են գործարքի գնով՝ ՖՀՄՍ 15-ի պահանջներին համապատասխան:

Ֆինանսական ակտիվները, բացառությամբ հեջավորման գործիքների բաժանվում են հետևյալ կատեգորիաների.

- ամորտիզացված արժեքով հաշվառվող,
- իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող,
- իրական արժեքով՝ այլ համապարփակ արդյունքի միջոցով չափվող:

Դասակարգումը բնորոշվում է հետևյալ երկու պարագայով.

- Խմբի՝ ֆինանսական ակտիվների կառավարման բիզնես մոդելը,
- ֆինանսական ակտիվի՝ պայմանագրային դրամական հոսքերի հատկանիշները:

Ֆինանսական ակտիվներին առնչվող ամբողջ եկամուտը և ծախսերը, որոնք ճանաչվում են շահույթում կամ վնասում, արտացոլված են ֆինանսական ծախսերում, ֆինանսական եկամուտում կամ այլ

ֆինանսական արդյունքներում, բացառությամբ առևտրային դեբիտորական պարտքերի արժեզրկման, որն արտացոլված է այլ ծախսերում: Խմբի ֆինանսական ակտիվները, ըստ կատեգորիաների ներկայացված են Ծանոթագրություն 10.1-ում:

Ֆինանսական ակտիվների հետագա չափումը

Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ

Ֆինանսական ակտիվները հաշվառվում են ամորտիզացված արժեքով, եթե ակտիվները բավարարում են հետևյալ պայմաններին (և չեն դասակարգված որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող).

- դրանք պահվում են այն բիզնես մոդելի շրջանակներում, որի նպատակն է պահել ֆինանսական ակտիվները և հավաքագրել դրանց հետ կապված պայմանագրային դրամական հոսքերը,
- ֆինանսական ակտիվների պայմանագրային պայմաններն առաջացնում են դրամական հոսքեր, որոնք հանդիսանում են միայն մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումներ:

Սկզբնական ճանաչումից հետո այս ակտիվները չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Այն դեպքերում, երբ զեղչման ազդեցությունն աննշան է, զեղչում չի կատարվում: Ֆինանսական գործիքների այս կատեգորիայում են դասակարգվում Խմբի դրամական միջոցները և դրանց համարժեքները, առևտրային դեբիտորական պարտքերը և այլ դեբիտորական պարտքերի մեծամասնությունը:

Ֆինանսական ակտիվներ՝ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող

Ֆինանսական ակտիվները, որոնք պահվում են «հավաքագրման համար պահվող» կամ «հավաքագրման և վաճառքի համար պահվող» բիզնես մոդելներից տարբեր մոդելի շրջանակներում, դասակարգվում են որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող: Հետագայում, անկախ բիզնես մոդելից, բոլոր այն ֆինանսական ակտիվները, որոնց պայմանագրային դրամական հոսքերը չեն հանդիսանում միայն մայր գումարի և հաշվարկված տոկոսի մարում, հաշվառվում են իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող: Բոլոր ածանցյալ ֆինանսական գործիքները դասակարգվում են այս կատեգորիայում, բացառությամբ հեջավորման գործիքների, որոնց համար գործում են հեջավորման հաշվառմանը ներկայացվող պահանջները:

Ֆինանսական պարտավորությունների դասակարգումը և չափումը

Խմբի ֆինանսական պարտավորությունները ներառում են առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը, որոնք ներկայացվում են իրական արժեքով, իսկ հետագայում՝ ամորտիզացված արժեքով:

4.11 Պաշարներ

Պաշարներն այն ակտիվներն են, որոնք պահվում են սովորական գործունեության ընթացքում վաճառքի համար, կամ հումքի, կամ նյութի ձևով՝ արտադրանքի թողարկման կամ ծառայությունների մատուցման ընթացքում օգտագործելու համար: Պահեստամասերը, վթարային սարքավորումները և օժանդակ սարքավորումները նույնպես ճանաչվում են որպես պաշար, եթե դրանք չեն համապատասխանում հիմնական միջոցների սահմանմանը:

Պաշարները հաշվառվում են ինքնարժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով: Իրացման զուտ արժեքը սովորական գործունեության ընթացքում վաճառքի ձևավորվող գինն է՝ հանած համալրման և վաճառքը կազմակերպելու համար անհրաժեշտ ծախսումները: Պաշարների ինքնարժեքը հաշվարկվում է՝ օգտագործելով առաջին մուտք՝ առաջին ելք (ԱՄԱԵ) մեթոդը, և ներառում է պաշարների ձեռքբերման, ինչպես նաև դրանք իրենց ներկայիս վիճակին և գտնվելու վայր հասցնելու ծախսերը:

4.12 Զուտ ակտիվներ

Խմբի զուտ ակտիվները ենթակա չեն բաշխման հիմնադիրների միջև ոչ սովորական գործունեության ընթացքում և ոչ էլ լուծարման ժամանակ:

Կուտակված արդյունքը ներառում է բոլոր ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանների չբաշխված շահույթը:

4.13 Շնորհներ և նվիրատվություններ

Անսահմանափակ նվիրատվությունները հասանելի են ընդհանուր նպատակների համար, ինչպես սահմանված է Խմբի կանոնադրությամբ: Հետևաբար, անսահմանափակ միջոց ճանաչված նվիրատվությունները ճանաչվում են որպես հասույթ, երբ դառնում են ստացման ենթակա:

Շնորհը ստացվում է հատուկ նպատակով և ենթակա չէ Խմբի կողմից ընդհանուր նպատակների օգտագործման համար: Շնորհը չի ճանաչվում, քանի դեռ չկա հիմնավորված երաշխիք, որ Խումբը կատարելու է դրան կից բոլոր պայմանները, և որ շնորհը ստացվելու է:

Շնորհները, որոնց հիմնական պայմանը Խմբի կողմից ոչ ընթացիկ ակտիվներ գնելը, կառուցելը կամ այլ կերպ ձեռք բերելն է, ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչվում են որպես սեփական օգտագործման ֆոնդեր և սիստեմատիկորեն փոխանցվում են շահույթ կամ վնաս՝ համապատասխան ակտիվի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում:

Այլ շնորհները ճանաչվում են սիստեմատիկ հիմունքով եկամուտ այն ժամանակաշրջանում, որի ընթացքում դրանք փոխհատուցում են համապատասխան ծախսումները, որոնց համար դրանք ստացվել են: Շնորհը, որը հատկացվում է Խմբին՝ ի հատուցում արդեն կրած ծախսերի կամ վնասների՝ առանց հետագա համապատասխան ծախսումներ կրելու, ճանաչվում է որպես շահույթ կամ վնաս այն հաշվետու ժամանակաշրջանում, երբ դառնում է ստացման ենթակա:

4.14 Պահուստներ

Պահուստը ճանաչվում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, երբ Խումբն ունի իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, և եթե հավանական է, որ պարտականությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտների արտահոսք: Եթե դրա ազդեցությունը զգալի է, ապա պահուստը որոշվում է ապագա դրամական արտահոսքերի զեղչման միջոցով՝ օգտագործելով մինչև հարկումը տոկոսադրույքը, որն արտացոլում է դրամի ժամանակային արժեքի վերաբերյալ շուկայի ընթացիկ գնահատումները և, կիրառելիության դեպքում, պարտավորությանը վերագրվող յուրահատուկ ռիսկերը:

4.15 Շահութահարկ

Ընթացիկ հարկ

Ընթացիկ շահութահարկը տարվա համար հարկվող շահույթից վճարվելիք հարկն է՝ հաշվետու ամսաթվին գործող կամ ըստ էության գործող հարկային դրույքաչափերով՝ հաշվի առնելով նախորդ տարիների համար վճարվելիք հարկերի ճշգրտումները:

Հետաձգված հարկ

Հետաձգված հարկը հաշվարկվում է ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և շահութահարկի հաշվարկման ժամանակ օգտագործվող համապատասխան հարկային բազաների միջև ժամանակավոր տարբերություններից: Հետաձգված հարկային պարտավորությունները ճանաչվում են բոլոր հարկվող ժամանակավոր տարբերությունների համար: Հետաձգված հարկային ակտիվները պետք է ճանաչվեն բոլոր նվազեցվող ժամանակավոր տարբերությունների համար այն չափով, որքանով որ հավանական է հարկվող շահույթի ստացում, որի դիմաց կարող է օգտագործվել նվազեցվող ժամանակավոր տարբերությունը: Այսպիսի հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները չեն ճանաչվում, եթե ժամանակավոր տարբերությունն առաջանում է գուդվիլի սկզբնական ճանաչումից կամ այլ ակտիվների և պարտավորությունների սկզբնական ճանաչումից այնպիսի գործարքում, որը գործարքի պահին չի ազդում ո՛չ հաշվապահական շահույթի, ո՛չ էլ հարկվող շահույթի վրա (բացի ձեռնարկատիրական գործունեության միավորումներից):

4.16 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցները և դրանց համարժեքները ներառում են կանխիկ միջոցները, բանկային հաշիվների մնացորդները և դրամական միջոցները՝ ճանապարհին:

Դրամական հոսքերի մասին համախմբված հաշվետվության նպատակով՝ դրամական միջոցների համարժեքները կարճաժամկետ, բարձր իրացվելի ներդրումներն են, որոնք հեշտ փոխարկվում են դրամական միջոցների՝ նախապես հայտնի գումարներով, և որոնց արժեքի փոփոխման ռիսկը նշանակալի չէ: Դրամական միջոցների համարժեքները պահվում են կարճաժամկետ դրամական պարտավորությունները բավարարելու նպատակով, այլ ոչ թե ներդրման կամ այլ նպատակներով: Խումբը դասակարգում է ներդրումները որպես դրամական միջոցների համարժեքներ այն դեպքում, եթե դրանք հեշտ փոխարկվում են դրամական միջոցների՝ նախապես հայտնի գումարներով, և որոնց արժեքի փոփոխման ռիսկը նշանակալի չէ:

4.17 Հատուցումներ աշխատակիցներին

Կարճաժամկետ հատուցումներն աշխատակիցներին այն հատուցումներն են, որոնք ենթակա են մարման ամբողջությամբ տարեկան այն հաշվետու ժամանակաշրջանի ավարտից հետո տասներկու ամսվա ընթացքում, որում աշխատակիցները մատուցել են համապատասխան ծառայությունները: Դրանք ներառում են՝

(ա) աշխատավարձերը և պարգևավճարները,

(բ) վճարովի տարեկան արձակուրդները և անաշխատունակության հետ կապված վճարովի արձակուրդները,

[(գ) սոցիալական ապահովության մասհանումները և այլ սոցիալական վճարները [չի վերաբերում կենսաթոշակային վճարների մասով աշխատակցի հաշվին պարտադիր պահումներին,]]

[(դ) ոչ դրամային հատուցումները (առողջության ապահովագրություն):

Երբ աշխատակիցները հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում Խմբին մատուցում են ծառայություններ, [Խումբն/Ընկերությունն] աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների չզեղչված գումարը, որն ակնկալվում է վճարել այդ ծառայությունների դիմաց, ճանաչում է՝

(ա) որպես պարտավորություն (հաշվեգրված ծախս)՝ արդեն վճարված ցանկացած գումար հանելուց հետո: Եթե արդեն վճարված գումարը գերազանցում է հատուցումների չզեղչված գումարը, Խումբը պետք է ճանաչի այդ տարբերությունը որպես ակտիվ (կանխավճարված ծախս)՝ այն չափով, որով կանխավճարը կհանգեցնի ապագա վճարումների կրճատման կամ դրամական միջոցների վերադարձի,

(բ) որպես ծախս, եթե գումարը չի ներառվել այլ ակտիվի արժեքի մեջ:

Վճարովի բացակայություններ

Վճարովի բացակայությունների ձևով աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների գծով ակնկալվող ծախսումները ճանաչվում են հետևյալ կերպ.

(ա) կուտակվող վճարովի բացակայությունների դեպքում՝ այն ժամանակ, երբ աշխատակիցները ծառայություն են մատուցում, որն ավելացնում է իրենց իրավունքներն ապագա վճարովի բացակայությունների նկատմամբ,

(բ) չկուտակվող վճարովի բացակայությունների դեպքում՝ այն ժամանակ, երբ բացակայությունը տեղի է ունենում:

Պարգևավճարներ

Պարգևավճարների գծով ակնկալվող ծախսումները ճանաչվում են միայն այն ժամանակ, երբ Խումբն ունի այդպիսի վճարումներ կատարելու ներկա իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, և պարտականությունը հնարավոր է արժանահավատորեն գնահատել:

Ներկա պարտականություն գոյություն ունի այն և միայն այն դեպքում, երբ Խումբը վճարում չկատարելու ոչ մի իրատեսական այլընտրանք չունի:

4.18 Հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման ընթացքում ղեկավարության կատարած նշանակալի դատողություններ և գնահատման անորոշություն

ՖՀՄՍ-ներին համապատասխան համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է, որ Խմբի ղեկավարությունը կարևոր գնահատումներ և ենթադրություններ կատարի, որոնք ազդեցություն են գործում համախմբված ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ ակտիվների և պարտավորությունների գումարների, ինչպես նաև հաշվետու տարվա եկամուտների և ծախսերի գումարների վրա:

Ենթադրությունները և դատողությունները շարունակաբար գնահատվում են և հիմնված են պատմական փորձի, ինչպես նաև այլ ցուցանիշների վրա, ներառյալ ապագա ակնկալվող իրադարձությունները, որոնք տվյալ հանգամանքներում համարվում են ընդունելի:

Խումբն իրականացնում է ապագային վերաբերող գնահատումներ և ենթադրություններ: Այդ հաշվապահական գնահատականները կարող են չհամապատասխանել իրական արդյունքներին: Ստորև ներկայացված են այն գնահատումներն ու ենթադրությունները, որոնց գծով առկա է ռիսկ, որ հաջորդ ֆինանսական տարում ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները կենթարկվեն էական ճշգրտումների:

Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետներ

Ղեկավարությունը կատարել է հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետների գնահատում: Ղեկավարության համոզմամբ գնահատված հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետներն էականորեն չեն տարբերվում այդ ակտիվների տնտեսական կյանքից: Եթե հիմնական միջոցների փաստացի օգտակար ծառայության ժամկետները տարբերվեն գնահատումներից, ապա ֆինանսական հաշվետվությունները կարող են էականորեն տարբերվել:

Վարձակալություններ

Խումբը չի կարող հեշտությամբ որոշել վարձակալության տոկոսադրույքը, հետևաբար, վարձակալության գծով պարտավորությունները չափելիս օգտագործում է լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը: Լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը այն տոկոսադրույքն է, որը Խումբը պետք է վճարի համանուն ժամկետով և արժեթղթով միջոցներ ձեռք բերելու համար, որոնք անհրաժեշտ են նմանատիպ տնտեսական իրավիճակում օգտագործման իրավունքի ձևով և նման արժեքով ակտիվ ստանալու համար: Հետևաբար, լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը ենթադրում է, որ Խումբը պետք է կատարի վճարում, ինչն էլ պահանջում է գնահատում, երբ դիտարկելի տոկոսադրույքներ չկան: Խումբը գնահատում է լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը հիմք ընդունելով դիտարկելի տվյալներ, ինչպիսիք են շուկայական տոկոսադրույքները՝ առկայության դեպքում: Խմբից պահանջվում է որոշակի գնահատում:

4.18.1 Հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման ընթացքում կատարված կարևոր դատողություններ

Ստորև ներկայացված են ղեկավարության՝ հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման ընթացքում կատարված դատողությունները, որոնք ամենաէական ազդեցությունն ունեն համախմբված ֆինանսական հաշվետվությունների վրա:

Հետաձգված հարկային ակտիվների ճանաչումը

Այն չափը, որով կարող է ճանաչվել հետաձգված հարկային ակտիվ, կախված է այն հավանականության գնահատումից, թե արդյո՞ք ապագայում հասանելի կլինի եկամուտ, որի դիմաց կիրացվեն նվազեցման ենթակա ժամանակավոր տարբերությունները և նախորդ ժամանակաշրջաններից բերված հարկային վնասը: Ի լրումն, անհրաժեշտ է էական դատողություն հարկային միջավայրում իրավական և տնտեսական սահմանափակումների և անորոշությունների գնահատման ժամանակ:

Պայմանագրերի վարձակալության ժամկետի որոշումը երկարաձգման մեթոդով

Խումբը վարձակալության ժամկետը սահմանում է որպես վարձակալության վաղաժամ դադարեցման ենթակա չեղարկելի ժամկետ, ինչպես նաև այն բոլոր ժամանակաշրջանները, որոնց վրա տարածվում է վարձակալությունը երկարաձգելու մեթոդը, եթե կա հիմնավորում, որ այն կկիրառվի, կամ այն

ժամանակաշրջանները, որոնց վրա տարածվում է վարձակալությունը դադարեցնելու մեթոդը, եթե կա հիմնավորում, որ այն չի կիրառվի: Խումբը կիրառում է դատողություն՝ գնահատելու համար, թե արդյոք ողջամիտ է կիրառել երկարաձգման մեթոդը:

5 Եկամուտ սահմանափակ և անսահմանափակ օգտագործման ֆոնդերից

Սահմանափակ օգտագործման ֆոնդերը առաջանում են որոշակի նպատակներով ստացված նվիրատվություններից, որոնք հասանելի չեն Խմբի ընդհանուր օգտագործման համար: Սահմանափակ և անսահմանափակ օգտագործման ֆոնդերից ստացված միջոցները և դրանց հետագա օգտագործումը ներկայացված են ստորև.

	2024թ.	2023թ.
Ստացված նվիրատվություններ, ներառյալ՝		
Հայկական ընկերություններ	108,346	54,553
Օտարերկրյա ընկերություններ	943,513	601,447
Անհատներ	6,392	74,981
	1,058,251	**730,981**
Սկզբնական մնացորդ	1,733	-
Սեփական օգտագործման ֆոնդերին փոխանցված	(6,522)	(13,000)
Ճանաչված եկամուտ	(1,053,462)	(716,248)
Մնացորդը տարվա վերջում	**-**	**1,733**

6 Վարչական ծախսեր

	2024թ.	2023թ.
Հատուցումներ աշխատակիցներին	116,830	136,716
Մաշվածություն և ամորտիզացիա	41,410	48,895
Գործուղման և ներկայացուցչական ծախսեր	52,768	63,480
Գրասենյակային պարագաներ և կոմունալ ծախսեր	15,350	17,921
Մասնագիտական ծառայություններ	15,242	21,904
Բանկային և ապահովագրական ծախսեր	12,728	12,879
Բնակարանի վարձակալության ծախսեր	6,984	13,968
Փոխարկման ծախսեր	4,382	5,407
Կայքի սպասարկում և առցանց հարթակների ծախսեր	8,793	17,583
Հանրային կապերի և մարքեթինգային ծախսեր	9,351	6,635
Փոստի և հաղորդակցության ծախսեր	3,725	3,642
Այլ	27,548	23,083
	315,111	**372,113**

7 Ծրագրային ծախսեր

	2024թ.	2023թ.
Հատուցումներ աշխատակիցներին	168,659	172,612
Մաշվածություն և ամորտիզացիա	14,693	17,585
Մասնագիտական վճարներ և պայմանագրային ծառայություններ	104,150	27,509
Միջոցառումների կազմակերպման ծախսեր	2,412	2,584
Երրորդ կողմին կատարված նվիրատվությունների ծախսեր	224,601	165,318
Ճանապարհորդական ծախսեր	2,784	9,259
Հանրային կապերի և մարքեթինգային ծախսեր	1,469	14,893
Լաբորատոր սարքերի և պարագաների ծախսեր	22,791	7,481
Այլ	2,942	3,638
	544,501	**420,879**

8 Հանգանակությունների գծով ծախսեր

	2024թ.	2023թ.
Հատուցումներ աշխատակիցներին	174,428	149,764
Միջոցառումների կազմակերպման ծախսեր	59,211	29,494
Մասնագիտական վճարներ և պայմանագրային ծառայություններ	23,858	2,649
Հանրային կապերի և մարքեթինգի ծախսեր	16,832	4,276
Ճանապարհորդական ծախսեր	23,446	26,708
Այլ	1,977	6,294
	299,752	**219,185**

9 Հիմնական միջոցներ

	Մեքենաներ և սարքավորումներ	Տրանսպորտային միջոցներ	Գրասենյակային սարքավորումներ	Այլ	Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ	Ընդամենը
Սկզբնական արժեք						
2023թ. հունվարի 1-ի դրությամբ	174,496	19,898	74,270	49,472	143,136	461,272
Ավելացում	200	-	7,904	14,033	104,984	127,121
Օտարում	(47,513)	-	-	(9,816)	-	(57,329)
Ընդհատված գործառնություններից օտարում	(140)	-	-	(9,153)		(9,293)
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**127,043**	**19,898**	**82,174**	**44,536**	**248,120**	**521,771**
Ավելացում	-	-	1,831	2,504	-	4,335
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**127,043**	**19,898**	**84,005**	**47,040**	**248,120**	**526,106**
Կուտակված մաշվածություն						
2023թ. հունվարի 1-ի դրությամբ	72,571	10,008	31,492	15,413	140,145	269,629
Տարվա հաշվարկ	21,594	1,978	7,195	15,246	23,989	70,002
Օտարման հետևանքով դուրսգրում	(28,798)	-	-	(2,549)	-	(31,347)
Ընդհատված գործառնությունների օտարման հետևանքով դուրսգրում	(140)	-	-	(4,756)	-	(4,896)
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**65,227**	**11,986**	**38,687**	**23,354**	**164,134**	**303,388**
Տարվա հաշվարկ	11,870	1,977	8,752	11,560	20,997	55,156
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**77,097**	**13,963**	**47,439**	**34,914**	**185,131**	**358,544**
Հաշվեկշռային արժեք						
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**61,816**	**7,912**	**43,487**	**21,182**	**83,986**	**218,383**
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**49,946**	**5,935**	**36,566**	**12,126**	**62,989**	**167,562**

Դեռևս շահագործման մեջ գտնվող ամբողջությամբ մաշված հիմնական միջոցների հաշվեկշռային արժեքը կազմում է 196,606 հազար դրամ (31 դեկտեմբերի 2023թ.՝ 179,565 հազար դրամ): Օգտագործման իրավունքի ձևով ակտիվները վերաբերում են Խմբի գլխավոր գրասենյակի վարձակալությանը: Վարձակալված գրասենյակի մնացածորդային օգտակար ծառայության ժամկետը 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմում է 36 ամիս: Հաշվետու ամսաթվի դրությամբ Խմբի հիմնական միջոցների նկատմամբ սահմանափակումներ չկան:

10 Ֆինանսական ակտիվներ և պարտավորություններ

10.1 Ֆինանսական գործիքների կատեգորիաները

Ֆինանսական ակտիվի և ֆինանսական պարտավորության յուրաքանչյուր դասի համար կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և ընդունված մեթոդների մանրամասները, ինչպես նաև եկամտի և ծախսերի ճանաչման չափանիշներն ու հիմքերը ներկայացված են Ծանոթագրություն 4.10-ում: Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքներն ըստ կատեգորիաների ներկայացված են ստորև:

Ֆինանսական ակտիվներ

	31 դեկտեմբերի 2024թ.	31 դեկտեմբերի 2023թ.
Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ		
Այլ դեբիտորական պարտքեր	1,402	677
Ստացվելիք շնորհներ	383	-
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	33,500	53,359
Ընդամենը ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ	**35,285**	**54,036**

Ֆինանսական պարտավորություններ

	31 դեկտեմբերի 2024թ.	31 դեկտեմբերի 2023թ.
Ամորտիզացված արժեքով պահվող ֆինանսական պարտավորություններ		
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	11,016	6,440
Վարձակալության գծով պարտավորություններ	76,486	92,941
Ընդամենը ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական պարտավորություններ	**87,502**	**99,381**

11 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական հոսքերի մասին համախմբված հաշվետվության նպատակով՝ դրամական միջոցները և դրանց համարժեքները ներառում են դրամական միջոցները դրամարկղում ու բանկերում և մինչև 3 ամիս մարման ժամկետ ունեցող կարճաժամկետ ներդրումները՝ նվազեցված բանկային օվերդրաֆտի մնացորդով: Ֆինանսական տարվա վերջի դրությամբ դրամական հոսքերի մասին համախմբված հաշվետվությունում ներկայացված դրամարկղում և բանկերում մնացորդները կարող են համադրվել ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվության հոդվածների հետ հետևյալ կերպ.

	31 դեկտեմբերի 2024թ.	31 դեկտեմբերի 2023թ.
Բանկային հաշիվներ, այդ թվում՝		
Մնացորդը Դրամով	3,705	3,375
Մնացորդը ԱՄՆ դոլարով	28,764	48,200
Մնացորդը Եվրոյով	1,031	1,784
Ընդամենը դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	**33,500**	**53,359**

Բանկային հաշիվները պահվում են հայկական բանկում, որն ունի պայմանագրային գործընկերոջ երկարաժամկետ ռիսկի BB- վարկանիշ:

12 Սեփական օգտագործման ֆոնդեր

	2024թ.	2023թ.
Մնացորդը տարվա սկզբում	137,248	195,359
Սահմանափակ և անսահմանափակ օգտագործման ֆոնդերից փոխանցված	6,522	13,000
Ճանաչված եկամուտ	(34,891)	(71,111)
Մնացորդը տարվա վերջում	**108,879**	**137,248**

13 Վարձակալության գծով պարտավորություններ

Սկզբնական ճանաչման ամսաթվի դրությամբ վարձակալության գծով պարտավորության նկատմամբ կիրառվող փոխառության միջին տոկոսադրույքը կազմում է 12%: Խմբի վարձակալության գծով պարտավորությունների հաշվեկշռային արժեքները և տարվա ընթացքում տեղաշարժերը ներկայացված են ստորև.

	2024	2023
Մնացորդը տարվա սկզբում	92,941	-
Պայմանագրի փոփոխություն	-	104,983
Վարձակալության գծով վճարումներ	(26,465)	(24,177)
Ֆինանսական ծախսի հաշվեգրում	10,010	12,135
Մնացորդը տարվա վերջում	**76,486**	**92,941**

Վարձակալության գծով պարտավորությունները ներկայացված են ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում հետևյալ կերպ.

	2024	2023
Ընթացիկ	22,560	18,672
Ոչ ընթացիկ	53,926	74,269
	76,486	**92,941**

14 Կրեդիտորական պարտքեր

	31 դեկտեմբերի 2024թ.	31 դեկտեմբերի 2023թ.
Առևտրային և կրեդիտորական պարտքեր	4,029	4,841
Չօգտագործված արձակուրդային օրերի գծով պահուստ	19,345	27,056
Վճարվելիք հարկեր	14,574	-
Այլ	6,987	1,599
Ընդամենը առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	**44,935**	**33,496**

Առևտրային կրեդիտորական պարտքերը հիմնականում արտահայտված են ՀՀ դրամով, ունեն 30-60 օր մարման ժամկետ և անտոկոս են: Խումբն ունի ֆինանսական ռիսկի կառավարման քաղաքականություններ, որոնք ապահովում են բոլոր պարտավորությունների ժամանակին կատարումը:

Չօգտագործված արձակուրդային օրերի գծով տեղաշարժերը հետևյալն են.

	2024	2023
Մնացորդը տարվա սկզբում	27,056	23,910
Տարվա ընթացքում հաշվեգրված	18,578	16,734
Տարվա ընթացքում օգտագործված	(26,289)	(13,588)
Մնացորդը տարվա վերջում	**19,345**	**27,056**

15 Ընդհատված գործառնություններ

2023 թվականին Հիմնադրամի խորհուրդը որոշել է լուծարել իր դուստր ձեռնարկությունը «Ընվանսդ Սոլուշնս Սենտր» ՓԲԸ-ն, քանի որ այն այլևս չի ծառայում իր նպատակին: Սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ Հիմնադրամի ղեկավարությունն ունի SAFE-ի պայմանագրերից բխող առկա պարտավորություններին առնչվող էական անորոշություն:

Հիմնադրամը ներկայումս խորհրդակցում է իրավաբանների հետ՝ այս պարտավորություններին առնչվող իրավական և ֆինանսական հանգամանքների մասով: Այս խնդիրների լուծումից հետո Հիմնադրամը կսկսի դուստր ձեռնարկության լուծարման գործնական ընթացակարգը:

Դուստր ձեռնարկության հիմնական միջոցները ամբողջությամբ ամորտիզացված են և վաճառքի համար ոչ պիտանի: ընդհատված գործառնությունների ակտիվները հիմնականում ներառում են պետական բյուջեից ակնկալվող դեբիտորական պարտքեր, որոնք ըստ ղեկավարության ամբողջությամբ փոխհատուցելի են: Բացի ակնկալվող դեբիտորական պարտքերից և դուստր ձեռնարկության բանկային հաշվին առկա դրամական միջոցներից, ընդհատված գործառնությունների մասով այլ ակտիվներ չկան, որոնցից տնտեսական օգուտների ներհոսք կարող է ակնկալվել: Այս ակտիվները նախատեսված են դուստր ձեռնարկության գործունեության դադարեցման ընթացքում հնարավոր պարտավորությունների մարման կամ ծախսերի հատուցման դիմաց:

«Ընվանսդ Սոլուշնս Սենտր» ՓԲԸ -ից ստացված արդյունքը ներկայացված է ստորև.

	2024	2023
Այլ եկամուտ	-	10,443
Վարչական ծախսեր	(4,589)	(8,748)
Տոկոսային ծախս	-	(3,283)
Շահութահարկի գծով փոխհատուցում	-	2,150
Ընդհատված գործառնություններից տարվա արդյունք	**(4,589)**	**562**

Օտարման խմբում ընդգրկված ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները խմբավորված են հետևյալ կերպ.

	31 դեկտեմբերի 2024թ.	31 դեկտեմբերի 2023թ.
Հիմնական միջոցներ	-	4,397
Հետաձգված հարկային ակտիվներ	59	67
Ոչ նյութական ակտիվներ		
Ներդրումներ համատեղ ձեռնարկություններում	81	81
Դեբիտորական պարտքեր	1,818	1,821
Մնացորդներ բանկերում	2,911	6,092
Ակտիվներ դասակարգված որպես ընդհատված գործառնություն	**7,172**	**14,761**

	31 դեկտեմբերի 2024թ.	31 դեկտեմբերի 2023թ.
Ֆինանսական պարտավորություններ SAFE պայմանագրերից	33,292	33,292
Պարտավորություններ դասակարգված որպես ընդհատված գործառնություն	**33,292**	**33,292**

16 Կապակցված կողմեր

Կողմերը սովորաբար համարվում են կապակցված, եթե կողմերը գտնվում են ընդհանուր վերահսկողության ներքո կամ եթե կողմերից մեկն ունի մյուս կողմին վերահսկելու ունակություն կամ կարող է էական ազդեցություն կամ համատեղ վերահսկողություն իրականացնել մյուս կողմի վրա՝ ֆինանսական և գործառնական որոշումներ կայացնելիս: Յուրաքանչյուր հնարավոր կապակցված կողմի հարաբերությունները դիտարկելիս ուշադրություն է դարձվում հարաբերությունների էությանը, այլ ոչ թե միայն իրավական կողմին:

Կապակցված կողմերի միջև գործարքները չեն կարող լինել նույն պայմաններով և գումարով, ինչ չկապակցված կողմերի միջև: Ղեկավարությունը գտնում է, որ Խումբն ունի համապատասխան ընթացակարգեր՝ կապակցված կողմերի հետ գործարքները բացահայտելու և պատշաճ կերպով ներկայացնելու համար:

Խմբի կապակցված կողմերը ներառում են մայր ընկերությունը, դուստր ընկերությունները (առանձին ֆինանսական հաշվետվությունների համար), ասոցիացված ընկերությունները և համատեղ ձեռնարկությունները, խորհրդի անդամները (տե՛ս ծանոթագրություն 1) և հիմնական ղեկավար անձնակազմը:

16.1 Գործարքներ կապակցված կողմերի հետ

Հաշվետու տարվա ընթացքում Խմբի և իր կապակցված կողմերի միջև իրականացվել են հետևյալ գործարքները, և հաշվետու ամսաթվի դրությամբ մնացորդները հետևյալն են:

Գործարքներ

	2024թ.	2023թ.
Ստացված նվիրատվություններ	598	71,982
Մատուցված ծառայություններ	2,716	-
Ստացված ծառայություններ	35,183	2,511

Հաշվետու ամսաթվերի դրությամբ մնացորդներ չկան:

16.2 Գործարքներ ղեկավարության և նրանց անմիջական ազգականների հետ

Հիմնական ղեկավար անձնակազմը ժամանակաշրջանի ընթացքում ստացել է հետևյալ վարձատրությունը, որը ներառված է «վարչական և ծրագրային ծախսեր» հոդվածներում.

	2024թ.	2023թ.
Աշխատավարձ և պարգևատրումներ	211,540	216,887
Այլ հատուցումներ	7,484	13,968

Մնացորդներ	31 դեկտեմբերի 2024թ.	31 դեկտեմբերի 2024թ.
Չօգտագործված արձակուրդային օրերի գծով պահուստ	3,305	12,526

17 Պայմանականություններ

17.1 Հարկեր

Հայաստանի Հանրապետության հարկային օրենսդրությունը հաճախակի ենթարկվում է փոփոխությունների, ինչը որոշ դեպքերում մեկնաբանությունների կարիք է առաջացնում: Հաճախ տարբեր հարկային և իրավասու մարմիններ տարբեր մեկնաբանություններ ունեն: Հարկերը հարկային մարմինների կողմից ենթակա են վերանայման և ուսումնասիրության: Հարկային մարմիններն օրենքով լիազորված են տուգանքներ և տույժեր առաջադրել:

Վերոհիշյալ հանգամանքները Հայաստանում կարող են առաջացնել ավելի մեծ հարկային ռիսկեր, քան այլ երկրներում: Ղեկավարությունը համոզված է, որ հարկային պարտավորությունների գծով կատարել է համապատասխան հատկացումներ հարկային օրենսդրության իրենց մեկնաբանության հիման վրա: Այնուամենայնիվ, հարկային մարմինների մեկնաբանությունները կարող են տարբերվել, և դրանց ազդեցությունը կարող է զգալի լինել:

17.2 Շրջակա միջավայրի հետ կապված խնդիրներ

Ղեկավարութունը համոզված է, որ Խումբը բավարարում է շրջակա միջավայրի հետ կապված Կառավարության պահանջները և վստահ է, որ Խումբը շրջակա միջավայրի հետ կապված ընթացիկ էական պարտավորություններ չունի: Այնուամենայնիվ, Հայաստանում շրջակա միջավայրի վերաբերյալ օրենսդրությունը զարգացման փուլում է, և դրա հավանական փոփոխություններն ու օրենսդրության մեկնաբանություններն ապագայում կարող են էական պարտավորություններ առաջացնել:

18 Ֆինանսական գործիքների ռիսկ

Ռիսկի կառավարման քաղաքականությունները և նպատակները

Խումբը ենթարկվում է արտարժույթի փոխարկման, պարտքային, տոկոսադրույքային և իրացվելիության որոշակի ռիսկերի: Խումբը դրամաշնորհներ ստանում է օտարերկրյա նվիրատուներից՝ արժույթով և կատարում է ծախսեր գործառնական արժույթից տարբեր այլ արժույթներով, հետևաբար, ենթարկվում է արտարժույթի փոխարժեքային տատանումներից կախվածության ռիսկին:

Խումբը չունի իրացվելիության ռիսկի էական ենթարկվածություն, քանի որ ունի զգալի անսահմանափակ դրամական միջոցներ, որոնք համալրվում են իր գործառնությունների արդյունքում: Խմբի ներդրումային քաղաքականությունը երաշխավորում է, որ իր ներդրումները հիմնականում պահվում են իրացվելի կարճաժամկետ ավանդներում:

18.1 Շուկայական ռիսկի վերլուծություն

Ֆինանսական գործիքների օգտագործման ընթացքում Խումբը ենթարկվում է շուկայական ռիսկի, հատկապես՝ արտարժութային ռիսկի, որը բխում է ինչպես գործառնական, այնպես էլ ներդրումային գործունեությունից:

Արտարժույթի ռիսկ

Խումբը գործարքներ է իրականացնում արտարժույթով և, հետևաբար, ենթարկվում է արտարժույթի փոխարժեքային տատանումների ազդեցությանը:

Խմբի գործարքների հիմնական մասն իրականացվում է հայկական դրամով: Արտարժույթի փոխարժեքային տատանումներից կախվածությունն առաջանում է Խմբի՝ արտերկրյա նվիրատվություններից, որոնք, ի սկզբանե, արտահայտված են ԱՄՆ դոլարով և եվրոյով:

Խումբը կառավարում է արտարժույթային ռիսկը՝ իր մնացորդները պահելով տարբեր արժույթներով:

Ստորև բերված աղյուսակում ներկայացված է Խմբի զգայունությունը՝ ԱՄՆ դոլարի նկատմամբ դրամի 10% (2023թ.՝ 10%) աճին/նվազմանը: 10%-ը (2023թ.՝ 10%) ղեկավարության կողմից գնահատված փոխարժեքի հավանական փոփոխությունն է: Զգայունության վերլուծությունը ներառում է միայն արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների մնացորդները և ժամանակաշրջանի վերջում ճշգրտում է դրանց փոխարկումը՝ փոփոխելով փոխարժեքը 10%-ով (2023թ.՝ 10%):

ԱՄՆ դոլարի նկատմամբ դրամի 10% (2023թ.՝ 10%) արժևորման դեպքում, տարվա արդյունքը կնվազեր 2,876 հազար դրամով (2023թ.՝ 4,769 հազար դրամ):

18.2 Պարտքային ռիսկի վերլուծություն

Պարտքային ռիսկն առաջանում է այն դեպքում, երբ պայմանագրային գործընկերը չի կատարում իր պարտավորությունները, որի հետևանքով Խումբը կարող է ֆինանսական կորուստներ կրել: Խմբի պարտքային ռիսկն առաջանում է ֆինանսական ակտիվներից՝ ներառյալ բանկերում պահվող դրամական միջոցները և դրանց համարժեքները և կարճաժամկետ ավանդները:

Բանկերում պահվող դրամական միջոցների մնացորդների և ավանդների մասով պարտքային ռիսկը կառավարվում է ավանդները տարբեր բանկերում պահելու միջոցով և բարձր վարկանիշ ունեցող ֆինանսական հաստատություններում պահելու միջոցով:

18.3 Իրացվելիության ռիսկի վերլուծություն

Իրացվելիության ռիսկն այն ռիսկն է, որ Խումբն ի վիճակի չի լինի մարել իր պարտավորվածությունները:

Խումբը վարում է իրացվելիության կառավարման քաղաքականություն՝ դրամարկղում և բանկային հաշիվներում պահելով բավարար միջոցներ, ինչպես նաև պահելով բարձր իրացվելիություն ունեցող ակտիվներ՝ գործառնական պարտավորությունները ժամանակին մարելու նպատակով:

2024թ.	Անտոկոս	Պարտավորություն վարձակալության գծով	Ընդամենը
Միջին կշռված արդյունավետ տոկոսադրույք (12%)			
Մինչև 6 ամիս	4,029	14,015	18,044
6 ամսից մինչև 1 տարի	5,803	14,015	19,818
1-5 տարի	13,542	63,364	76,906
	23,374	**91,394**	**114,768**

2023թ.	Անտոկոս	Պարտավորություն վարձակալության գծով	Ընդամենը
Միջին կշռված արդյունավետ տոկոսադրույք (12%)			
Մինչև 6 ամիս	4,841	13,298	18,139
6 ամսից մինչև 1 տարի	8,117	13,298	21,415
1-5 տարի	18,939	89,178	108,117
	31,897	**115,774**	**147,671**

Signer: ՀՀ ՊԵԿ
Date: 30.06.2025 12:35